

«Արմենիա, Հայաստան եւ Սօսիսթի անունները պատմական հետազոտութիւնը անուն նախապաշարմամբ լի եւ իւր կրօնութեան այնչափ պատիւ բերող յօդուածը, որուն դէմ Ուսշլ. Դ. Մառ պատասխանած էր փութով НОВОЕ ОБОЗРѢНІЕ լրագրին մէջ, Դոյն ժամանակը Մառ» պարզ ընդդիմադրութեամբ մը չգտնացաւ, այլ իմացուց նաեւ որ պատմական փաստերով պիտի ապացուցանէ հայկական մատենագրութեան վրացականին վրայ բնած ազդեցութիւնը։ Այսօր ունինք մեր առջեւը՝ Ռուսացական տառ խոստացած գրութիւնը՝ ИЗЪ ПОЪЗАНІИ НА АДОПЪ, Ասոր մէջ հայագէտն Ասորի, Հայ եւ Վիք մատենագրութեանց առնչութիւնը իր պարզէ։ Այս հատաններէն մեզի ամենակարեւորն է յետինը, որուն մէջ հեղինակը փաստերով կ'ապացուցանէ թէ Վրաց մատենագրութիւնն Հայոց գրականութիւնէն ինչպիսիք ունեցած է։ Իբր առաջին փաստ՝ Մառ յառաւել էր բերէ Վրաց Ս. Գրքին՝ որուն վրայ հայերէնի բնած ազդեցութիւնը կ'ապացուցուի յատուկ անունաց հայերէն ձեւերէն, հայերէն յետեւ գործածութիւնէն։ Երրորդ տեղի իսկ բազմիցս կատարուած Ս. Գրքի սրբագրութիւնը՝ չեն կրցած բոլորովին խափանել։ Մառի առ այս գործածած ձեռագիրը գրուած էր 978ին։ Բայց աւելի ջորեղ է այն փաստը՝ որ կը գտնենք Վրաց վկայարանութեանց մէջ։ Ասոնց հայերէն թարգմանուած ըլլալը կ'ապացուցուի՝ չհաշուելով ուրիշ ապացոյցներն՝ այնու որ ասոնց մէջ կը գտնուին թուով 10—11 հայ Սրբոց վկայարանութիւնները։ (Սանդուխտ, Ռսկեանը, Սուրբաբանը, Ս. Գր. Լուսաւորիչ եւ թողանք, Դերսեւ Մեծ, Սահակ, Առովմանը, Վարդան Մամիկոնեան, Էռնան, Դաւիթ Դրեւեցի եւն.) Առ այս անգոր համարելու չէ եւ այն պարագան որ Գեորգ զորավարի վկայարանութեան մէջ՝ Գեորգ զուտ հայկական անունանդրութեամբ շերտեր կը կոչուի։ Մառի այս սքանչելի ուսումնասիրութեան վրայ թերթիս մէջ այլուր պիտի խօսուի, անոր համար չենք ուզեր հոս այնչափ ծանոթանալ։ Այսչափի միայն կ'ընենք թէ այն բազմաթիւ պատմական փաստերը՝ որ կ'ապացուցանեն Հայոց գրականութեան վրացականին վրայ ազդեցութիւնը, հետեւաբար ալ վերջնայ առաջինն շատ պարագայից մէջ ունեցած ինչպիսի՝ այս ուսումնասիրութեամբ ստացած չեն, եւ իսկ այնքան որ առողջ եւ թիւր պատշաճ տպագիրի ուրիշ պատմական փաստեր ալ յաւելորդաբար ի լոյս հանուելու առիթ կ'առնենայ։ Մտադրութենէ վերջելու չէ եւ այն՝ որ Վրացիք Հայոց եկեղեցիէն բաժնուելէ ետքն ամենայն կերպով ջանացած են հայերէնի իրենց մատենագրութեան վրայ բնած այս ազդեցութիւնն մէրսեղաց բաժնաւոր. պարագայ մի, որ այս փաստերն մեզի եւս աւելի յարկէ կ'երեւցեն։



ՅԱՅԿԱՅԵՐԵՆ ԾԵՍՈՒԲԱՆԸ

Վիննա, 30 Յուլիս 1899

Անգղիայ պատրաստութեանց մէջ է. որուն դէմ... Տրանսլաի եւ Անգղիոյ մէջ քաղաքական խնդիրները սուր կերպարան մ'առած են, այնպէս որ կը վահեցուէր որ պատերազմ՝ մը չծագի. ոգինքը քիչ շատ խաղաղեցան երբ Krüger անգղիացի գաղթականաց պահանջմանց նկատմամբ Բաքիլուտոյ գլխուն գաղթականութեան զանրեցին ճետ բանակցութեան մէջ մտաւ. թեւ բանակցութիւնը ապարդիւն մնացին, սակայն խնդիրն խաղաղական ճամբով լուծելու յոյսը դեռ եւս չէ բարձուած։ Անգղիոյ պատրաստութիւնները՝ շատերը Տրանսլաի ճետ աղբնութեան մէջ կըրդնեն. Անգղիա ցայժմ միայն մէկ պատերազմական նաւ դրկած է Դելագայի ծովեզրը։

Անադիա։ Բարձրագոյն հրամանի մ'արդեամբ՝ Աստորիոյ-Հունգարիոյ մէջ ներքին համաձայնութիւնը կոցա կարգադրուի, գոնէ ըստ մասին մինչեւ 1904 եւ 1907, երբ խօսք կ'ըլլար Սէլի կամ Թունի պաշտօնարանին անկման վրայ։ Սէլ յաղթական դարձաւ Բուդապէստ, եւ Աստորիական պաշտօնարանն է դարձեալ, որ Դունգարացիոյ շատ պահանջմանց տոնի տուաւ։ Միակ արդիւնքը զոր ունեցաւ Թունի կ'ըսուի թէ Հունգարիոյ՝ երկու պետութեանց հասարակաց ծախսոց համար տուած 30% թիւ մը բարձրացումն ըլլալ. խնդիր մը որ շատ խնդրական է եւ դեռ չէ հրատարակուած։ Այժմ Դունգարական Խորհրդարանն ներքին համաձայնութեան 20ի չափ առաջարկութեանցը վրայ կը խորհի, որոնց մի առ մի կը հաւանի։ Աստորիոյ մէջ Խորհրդարանն փակուած ըլլալուն § 14ի զօրութեամբ դաշնադրութիւնը պիտի հրատարակուի։

Բնդիա։ Կառավարութեան առաջարկած ընտրութեանց նոր օրէնսդրութիւնը Բնդիոյ մէջ մեծամեծ խռովութիւններ յառաջ բերած է, զորոնք ընկերվարականաց պատգամաւորք խաղաղելու տեղ աւելի կը գրգռեն, մինչեւ իսկ ընդհանուր ապստամբութիւն սպառնալով։ Բրիւսէլի,

եւ այլ մեծամեծ քաղաքաց քաղաքապետներն յայտարարած են կառավարութեան, որ եթէ նոր օրէնսդրութեան վրայ պնդէ իրենք խաղաղութեան երաշխաւոր չեն կրնար ըլլալ: Նախարարապետ Վանդէրպէօրէնում մտադիր է հրաժարականը տալու:

Գաղղիոս: Ընկերվարականաց Խորհրդարանի մէջ մէկ հարցապնդմամբ՝ Դիւպիւի՝ իւր պաշտոնարանումն ինկաւ ամսույս 12ին, նախորդ օրը ձիարշափի առթիւ Լուքէի պաշտպանութեան համար շտեմնուած զինուորական եւ ոստիկանական մեծ բազմութիւն մը հրապարակը թափելէն ետքը. որպէս զի հակառակ ցոյց ընողները զսպէ: Դիւպիւիի անկումն անոր համար պատճառեցին ընկերվարականը վասն զի Դրէիֆուսի խնդրին մէջ իրենց ուզածին պէս խստութիւն չէ բանեցուցած հակահրէականաց եւ քանի մը զօրավարաց դէմ: Լուքէ նոր պաշտոնարանի կազմութիւնն յանձնեց Պուանկարէի՝ որ չկրցաւ յաջողիլ. Վալդէկ-Ռուսոյ ալ առաջին անգամ յաջողութիւն չունեցաւ: Բուրժուա՝ որ առ այս պակեման հաազի գէնընկեցութեան համաժողովէն կոչուած էր՝ հրաժարեցաւ. մինչեւ որ հազիւ երկու շաբաթ ետքը Վալդէկ-Ռուսոյ երկրորդ անգամուն կրցաւ յաջողիլ այնպիսի պաշտոնարան մը կազմել որ իւր անդամոց կարծեաց եւ սկզբանց հակասութեամբն աշխարհիս վրայ միակ նշմարուածն է: Վալդէկ-Ռուսոյ՝ ամենամեծ Դրէիֆուսեան եւ Հրէից սիրականն է. Միլլըրան անուանի ընկերվարական՝ որուն նախնաբար յանձնուած էր արդարութեան պաշտօնէութիւնը (") Հանրային գործոց պաշտօնեայ է. զօրավար Գալիֆէ՝ որ ժամանակին ընկերվարականաց պատսամբութիւնը ջնախջանց՝ նաեւ անոնց դէմ դարուս քաղաքակրթութեան անարժան անգլեմութիւններով պատերազմի պաշտօնեայ է: Երկաթուղեաց պաշտօնեայ է նմանապէս ընկերվարական մը: Այս գարմանալի եւ ծիծաղելի պաշտոնարանին անդամներն իրարու հետ կապող միակ զօդն Դրէիֆուսի խնդիրն է. անոր համար հակառակորդք ամենայն իրաւամբ այս զուտ Դրէիֆուսեան պաշտօնարանը՝ Դրէիֆուսեան-Դիկտատոր կը կոչեն, այնպէս որ ընդ Դրէիֆուսի անմեղ հրատարակուիլը (որշատ հեռու չէ) այս

պաշտոնարանը՝ իւր անդամոց ներքին հակասութենէ միայն պիտի քայքայի: — Դրէիֆուս՝ այսօր զինուորական պահապանութեամբ հասնը է Ռէն, ուր պատերազմական ատենան պիտի գումարուի:

Գերմանիա: Ի մեծ ցաւ կառավարութեան եւ Գերմանիոյ կայսեր՝ որ անձնապէս ալ միշտմտած էր գործաւորաց պաշտպանութեան նկատմամբ առաջարկուած նոր օրէնսդրութիւնը Խորհրդարանէն մերժուեցաւ: Նոր օրէնսդրութեան դէմ քուէ տուաւ եւ Եոնտրոյ՝ վասն զի այս օրէնսդրութեան չափազանց խստութեամբը՝ գործաւորաց անձնական ազատութիւնը ըռնաբարանելու վտանգին կ'ենթարկուէր:

Սպանիա: Թագուհին ամսույս 16ին ստորագրեց այն դաշնագրոյն որով Կարոլինեան, Մարիանեան եւն արքիպեղագուսները Գերմանիոյ կը ծախուին: Սպանիա գաղղիական ընկերութեանց ծախեց վերջերս իւր պատերազմական նաւերուն մէջէն երկու զրահաւորներ: Տեղիս տեղիս խոսքովսիններ ծագած են:

ԲՈՎԱՆԵՐԱԳՈՒԹԻՒՆ

ՌԵՍՊՈՆԵԱԿՆԵ

ՊԱՏԵՐԱՅԻՆ — Բողոքական եկեղեցական վարչութեան պահանջներունքն Եղիսաբեթուպոլսոյ հասարակութիւնն. 198:

ԳՐԱՎԱՆ — Խիկար եւ իւր իմաստութիւնն. 198: ՀԱՆԽՈՍՍԱՅԻՆ — Հայ թոճական, ժողագիրք "Օգոստ թոճական, մանրտոմար. 201:

ԼԵՃՈՒՄԱՅԻՆԱՅԻՆ — Հայերէնի քննադատ եւ կըրկատըր քառերը (630 քառի քննութիւն). 202: — Եւրոպիոյ Հայոց գաւառաբարբառը. 207:

ՄԱՏԵՆԱՅԻՆԱՅԻՆ — Ժողովածոյց առակաց Վարդաշայ, Նիկիթեր պատմութեան Հայոց միջնդարեան մատնագրութիւնը՝ ըստ Նայազէտը. Մարդ. 210:

ՄԱՏԵՆԱՅԻՆՈՍՍԱՅԻՆ — 4. Յիմնունի քննադատութեան, ԵՆՆԱՅԻՆ "Հիտտիոց եւ Հայք" գրքին վրայ. 216:

ՆՈՒՆԵՆԵՐ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՅԻՆՈՒԹԻՒՆ. 219:

ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹԵՐԻ ԺԱՂԱՅԴՈՒՆԱՅ — 1. Պառնեանի երկերը: — 2. Պր. Մանուէլեան եւ իւր վերջին ժողատարարութիւնը: — 3. Պեղծ Պոռնանցի քառամամակը: — 4. Պոռն. Ն. Մառ — Մագիստրոս: — 5. "Նորայրական օգնութիւնը" եւ Ցաղկաշայ: — 7. Հայ գրականութեան վաղեմոյն վրայ ունեցած ազդեցութիւնը. 221:

ԲԱՆԱԿԱՅԻՆ ՏԵՍՏՈՒԹԻՒՆ 223:

ՀՐԱՏԱՐԱՅԻՆ ԵՒ ՊԱՏԵՆԱՅԻՆԱՅԻՆ ՆՈՐԱՅԻՆ

4. ԲԱՓԱՅԵՆ Կ. ՊԱՐՈՆՅ

ՎԻՆԵՆԱ, ՄԻԻԹԵՐԵՆ ԵՒ ՑԱՐԱՆԱ